

ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ, 68-րդ, 91-րդ և 93-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի մայիսի 19-ի թիվ 1187-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն, ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի թիվ 387-Ն, ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 1058-Ն որոշումների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1110-Ն հրամանի պահանջները

**կարգադրում եմ՝**

1. Մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ մարզպետարանի աշխատակազմ ներկայացնել.
  - 1) մինչև 2012 թվականի փետրվարի 1-ը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 1058-Ն որոշմամբ հաստատված ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը՝ փաստաթղթային և էլեկտրոնային ձևով
  - 2) մինչև 2012 թվականի մարտի 1-ը՝ 2012 թվականի ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը՝ 2 օրինակից.
  - 3) մինչև 2012 թվականի մարտի 15-ը 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության 1. 2. ձևերը, զուտ շահույթի բաշխման ուղղությունները՝ ծախսման նախահաշիվը, պետական բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահաբաժնի վճարման առաջարկվող չափի վերաբերյալ առաջարկությունը և հաշվարկը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1110-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան, ինչպես նաև ընկերության վերստուգողի կողմից կազմված եզրակացությունը՝ ընկերության 2011թ. ֆինանսական հաշվետվությունների հավաստիության ստուգման արդյունքների մասին:

Տնտեսագիտական դասակարգման, նախահաշվով նախատեսված և փաստացի կատարված եկամուտների և ծախսերի ու շեղումների մասին տեղեկանքը, ինչպես նաև 2011թ. տարեկան ճշգրտված ֆինանսատնտեսական մոնիտորինգի տվյալները /ՖՏՄ 1.2.4.7 և հավելված 3.4.5.6 ձևերով/՝ 2 օրինակից:

2. Մարզի առողջապահական ընկերությունների վերստուգողներին՝
  - 1) մինչև 2012 թվականի մարտի 1-ը մարզպետարանի աշխատակազմ, իսկ մինչև 2012թվականի հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարություն ներկայացնել ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ստուգման մասին եզրակացությունը և ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների, խախտումների և դրանց վերացման ուղղությամբ ընկերությունների կառավարման մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների մասին տեղեկանքը՝ 2 օրինակից.

- 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը մարզպետարան ներկայացնել 2012 թվականի տարեկան հաստատված աշխատանքային ծրագրերին համապատասխան նախորդ եռամսյակի համար նախատեսված օբյեկտների ստուգման արդյունքների մասին տեղեկանքները:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը /Ա. Մելքոնյան/ և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Ա. Սահակյան/ ապահովել.
  - 1) առողջապահական ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների, ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների ու այլ փաստաթղթերի ընդունումը, վերլուծումը և ներկայացումը մարզպետի հաստատմանը.
  - 2) սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, իսկ ֆինանսատնտեսական մոնիտորինգի ձևերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն.
  - 3) սահմանված կարգով և ժամկետներում ընկերությունների վերստուգողների 2011թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հավաստիության ստուգումների մասին եզրակացությունների, ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերաբերյալ ընկերությունների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների մասին տեղեկանքների ընդունումը, վերլուծումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն :
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից: